



77. ԿԵՌԹՆՈՒԿ ԽԱՆԶԱԴԵՆ

Խոխե՛ք, ով ուզում ա, թո լսի, մին ղանչանգ, մին ղանչանգ նաղըլ եմ ասիլու, համա առաչուց ասեմ, որ ըստեղ սուտ ասածը կա ոչ, թեմ ինի էլ, մին-երկու պան կինի: Դե անգա՛ճ կալեք:

Ինըմ ա, ինըմ չի, մին թաքավոր ա ինըմ, ըստրան էլ՝ իրեք տղա: Էրկուսը փասկված են ինըմ խանգաղեքի հետ, համա կուճիրը, որ կետի ղրաղին փած մին չիմանտ ղավախ էր, փասկված չի ինըմ:

Հերն ու մերը իչքան յախեն կտրում են, թե՛ տո՛ւ վել փասկվի, ամանլ չի կամ, տղեն ասըմ ա. «Հանամ վախտը չի, հանամ իմ հարս-նացուն մորիցը իլել չի»:

Էս տղեն հո՛ւչ ու միտկը տված ա ինըմ ավի: Ամման օր քինըմ ա սար ու չո՛ղ, քար ու քոլ ման ա կանխ, օրը մին պան ա սըպանըմ, տեղն ու տեղը կրակ ա անըմ, խըրովըմ, ուտըմ, մնացածը տալիս չոբաններին ու խոխոցը, ինքը տամը-տանտանկ կանխ տուն:

Ընդրա ահիցը ոչ մինը կարըմ չի ռանչա՛ր ու ախկաղ մարթ-կանց քո՛ռոլ տա, ոչ մին ղաչաղ իրեըմ չի էտ ղոլերըմ: Էնքան պարի, մարթամոտ ա ինըմ, որ չիման էլ սիրըմ են ուրանց խոխոցիցը շատ:

Թաքավորի տղեն մին օր էլ եղնիկի բալա յա սըպանըմ, կրակ անըմ, որ խըրովի, մին էլ ինչ տեսնա, որ լավ ինի. տենըմ ա մին կուճի կեռթնուկ եկավ կրակի ղրաղին պըպըգեց, սկսեց տըքանալ:

Տղեն սնա չի հանըմ, ծեռք չի տալիս, կլոխը կախ, միսը հանըմ ա, քաչըմ շամփուրին ու ըսկսըմ խրովիլը: Հենց որ խըրովածի հո-տը վեր ա ինըմ, բոլղան տղի անգաճը մին պանակ սնա ա ընգնըմ.

—Փա՛հ, փա՛հ, փա՛հ, համա խըրոված ա, հա՛...

Տեսըն ա եչըմ, տենըն ա եչըմ, ոչ ով կա ոչ, համա սնսը մոտի-կից ա կանխ:

—Թաքավորի՛ տղա, մին թիքն էլ ի՛ղ տու:

Վերչը տղեն կլխի յա ընգնըմ, որ կա, կա ոչ, էտ խոսողը կեռթ-նուկն ա, մին բաբաթ թիքն փափուկ միս ա ճոկըմ, քըցըմ առաչը:

Կեռթնուկը, որ ուտըմ ա, քըչտանըմ, տանըմ ա թաքավորի

տղին ասում. — Տասը տարի յա՛ էսքամ համով միս կերել չի, օրթնվի քու եկած ճրնապեն, ոտիտ տակին քարը կնանչի:

— Էտ չիմա լնվ, — ասում ա թաքավորի տղեն, — համա ասա՛ տենամ՝ տո՛ւ ո՞վ ես. թն ղորթից կեռթնուկ ես, ո՞նց ես մարթի լնգվով խոսում, թն մա՞րթ ես, խի՞ ես կեռթնուկի կաշի հըքել:

— Թաքավորի՛ տղա, — ասում ա կեռթնուկը, — վախտին ես էլ քե մնան խանգաղա յի. տասնըչորս տարիս հնլն թըմամել չէր, թաքավոր հորըս հու թաքուհի մորըս մինուճարն ի, աչկների լիսը, համա որ բախտըս սե էր, ի՞նչ կնրիմ անիլ: Մին օր էլ, սե իներ էն օրը, հերըս ու մերըս ինձ էլ հետերնին տարան ման կնլի: Դե տո՛ւ մեր ղոլերըմի իլել չես, մեր չոլերի հոտն ու լնգզնթը գիղնլ չես: Որ ղոլը եչում ես, ոննգ-ոննգ ծաղիկնի են, որ ղոլը քինում ես, զանգանկ անպոլերնի են:

Թո՛ւթո՛ւնմաղու մնան ծաղիկից ծաղիկ ի վազ տալիս, քաղում փունջ կալում, երքում ու ծիծանղում: Հերըս ու մերըս էլ եչում ին ինձ, փառավորվում: Շտեղան-չտեղ մին սըտանի քամի պըցրացավ, եկավ ու ինձ փըթաթեց, տափիցը կտրեց, տարավ:

Անգաճիս միննկ հորըս ու մորըս սնսը հըսավ. — Բալա՛, վա՛յ...

Եփ աչկերս պնցեցի, տեսա՛ մին ամարաթըմ եմ, կըչտիս էլ՝ մին աժղահա:

Մարթ ասեմ, մարթ չէր, կել ասեմ, կել չէր, համա մարթի լնգվով խոսում էր. — Թաքավորի՛ ախճիկ, — ասավ, — ըստանա եղը տո՛ւ իմ կնիկն ես, ես քու մարթը: Իմ էս ամարաթը՝ քե փեչքեչ:

Եփ որ ես ատկազ կաղնեցի, հերսոտեց մին կուճի փեղով կլխիս տվավ, թն. — Դե որ ուզում չես, քե կեռթնուկ եմ չինում, որ ոչ ով իրեսիտ եչի ոչ, ով էլ եչի զըզվիլով վրես թքի, աս կենա: Տո՛ւ կեռթնուկ կըմնաս էնքամ վախտ, մինչու մին աղամորթի քե խրոված միս կըտա, եղո էլ կըտանի ուրան կնիկ:

Հալղագիս բախտը քե ինձ թո՛ւլմիչ արավ: Նրոված միսը տվար, թն որ տանես քե կնիկ, փո՛ւլմանիլ չես:

— Թաքավորի տղեն կեռթնուկին տնում ա տոպրակըմը, կնլիս հորը կուչտը:

— Ա՛՛ հեր, — ասում ա, — ես էսքան տարի քինանցել եմ ավի, համա ավ չեմ պերել տուն: Սօր պերել եմ: Մինչու մ՛հի տո՛ւք իք ասում, որ փաակվեմ, մ՛հի ես եմ ասում՝ փաակե՛ք ինձ:

— Ո՞ւմ ես հավան կացել, որթի՛, — ուրխացած հըրցնում են հերն ու մերը, — որ շահաղին յա խանգաղին ա սիրտըտ կպել, ասա՛, քինանք պերենք:

— Ծեղ նեղութուն չեմ տալ, հարսնացուս հեսա կչտիս, — ասում ա տղեն, կեռթնուկը տինում հորն ու մոր առաչին:

Թաքավորն ու Թաքուհին շատ վախ ու վիշ են անում, շատ են համոզում տղին, որ կեռթնուկիցը ծեռք քաշի, համա ճար չի ինքն: Տղեն ասում ա. «Թն կա, էս ա, Թն կա ոչ, էս ա»:

Ճարերնին կտրված ասում են՝ լնվ, Թաք վերչը տո՛ւ փուշմանես ոչ, ախշարքովը մին խայտառակ չինես:

Դո՛ւզ ա, տղեն կեռթնուկին պերքն ա ուրն օթաղը, համա դե ոխակ չի անում մոտ Թակի: Դարդիցը ուրնն նորմեկանց տալիս ա չոլերին, համա հենց տուն ա կնլիս, օթաղըմը մին Թազա պան ա տենում:

Մին օր տեղաշորի վրեն տենում ա մին պանակ ու նախշուն ջե-ջիմ, ոնց որ օցի պերանիցը քաշած: Մին օր տենում ա ուրն ու-բաչկեն նըհենց ա գնթթած, որ անասիլի: Ճանչերն էլ հու էնքան համով-հոտով ա ինքն, որ տղեն զարմանք ա կըտրքում.

— Կեռթնո՛ւկ խանգաղա, էս ո՞ւմ ծեռքի պանն ա:

— Ի՞նչ գիտամ, հազար նոթանի կան, մինն արած կինի, էլի:

Սըհենց խեղճք վախտ ա աս կենում:

Օրերից մին օր էլ տղեն քնած ա ինքն: Բոլորան անգաճին մին քախծր, մին տուրեկան երբի սնս ա ընգնում, աչկերը պնց ա անում, տենում ա՝ կշտին կեռթնուկն ա:

— Էտ տո՛ւ իր երքըմ, — հրքցնում ա:

— Թաքավորի՛ տղա, ես ի, Թն տուրքտ չի կնլիս, էլ երբիլ չեմ:

— Չէ՛, երքըտ դանչանգ էր, էտ որ մին պան արժեր:

Ըտանա եղը տղեն կեռթնուկ խանգաղի երբին հայիլ-մայիլ քնում ա, երքովն էլ վե ա կենում: Սըհենց ապրում են:

Մին օր էլ Թաքավորը կանչում ա տղոցը, Թն՝ ծեր կնանոց հետ հնգըրվեք, որ մեծ դոնախլըղ ա ինիլու: Հըրեան Թաքավորնին հու երգրի չիմ Թավաղնին վհաքվիլու վեն պալատը, ծեր ախպոր հըր-սանիքն ա:

Երկու ախպերնին ուրխացած քինում են հարսների կուշտը, Թափշուր անում, որ Թնդարիք քաշեն, գուքվեն-գըրթարվեն:

Կուճիլը կնլիս ա ուրն օթաղը հու կուչ կնլիս պուճախըմը:

Կեռթնուկը թըռնում ա կոքը, հըրքցնում. — Խի՞ ես հեխճ-հեխճ նստել, ի՞նչ ա իլել:

— Էհ, ինչ ասեմ: Հերքս ուզում ա մեր հըրսանիքն անի, ախպոր-ցըս պանը խեր ա, ընդանք ուրննց կնանոցը հետ հնգըրվում են Թաքավորական դոնախլըղին, բա ե՞ս: Ընդանք մհի գուքվում են, գըրթարվում են, ես ոչ մի պան չունեմ, էտ էլ ջըհնդամը, քե ո՞նց տանեմ մարթկանց կուշտը:

— Յանի էտ հըրսանիքը ե՞փ ա ինիլու, որ տհենց մտկի ծովն ես ընգել, — հըրքցնում ա կեռթնուկը:

—Դե ես իմ, մին իրեք-չորս չափանիշ կըքաշի, էլի...

—Թաքավորի՛ տղա,—ասըմ ա,—էքուց քե մհար մին ծեռք ընդենց չոր պերիլ կըտամ, որ չիմմը հայիլ-մայիլ կըտրեն, մնացած պաների մհար էլ փիքը մի՛ անիլ, Աստոծ օղորմած ա, էտ ղաթըմը հանլըմի մին լիս կըպանցվի:

—էքսի օրը Թաքավորի տղեն, որ տեղիցը վեր ա կենըմ, տենըմ ա կլխանը վեր մին թանգամ չոր ա կախ տված, որ հըքնըմ ա, հիլու առաչին կաղնըմ, արմանքից պերանը պանց ա մնըմ:

Կանանչ-կարմիրի չիմ ունեցերըմը շափաղ-շափաղ ա տալիս Թաքավորի տղի չորերը:

Կանչըմ ա կեոթնուկ խանգաղին, հըրցնըմ.—էս Թավոնը չորը մարթի ծեռի պան չի, շտեղա՞ն ա:

—Դե որ մարթի ծեռի պան չի, էլ շտեղա՞ն կինի, ես եմ կարել:

Թաքավորի տղեն կեոթնուկին տնըմ ա պուան մեչին, պըրըցնըմ հու ճակատը պաչըմ:

—Վախ, Թաքավորի՛ տղա, մհի վհատըմ եմ, որ սիրտըտ ոսկի յա, տո՛ւ իսկապես իմ ճակատակիրն ես:

Հենց էս խոսկի վրեն կեոթնուկի կաչին տրաք-տրաքըմ ա, կուտուր-կուտուր ինըմ, մեչիցը տո՛ւս ա կանլիս մի հոլրի-մանլագ, մին կաղարյալ խանգաղա, մին արմաղան ախճիկ:

Թաքավորի տղեն փթաթվըմ ա ախճկա կուլերովը հու ուրախութունիցը լանց ինըմ, ախճիկն էլ մին ղոլիցն ա դան պահըմ, որ ամման ինչ էսքան պարեհաջող պրծավ:

Թող կարոտած սրտերն ուրո՛ւր անա կըշտանան, մենք քինանք տենանք տղի ախպերանքն ու հարսները ի՞նչ պանի վրա են, ի՞նչ թանգանիք են քաչըմ:

Էրկու ախպերնին ուրանց կնանոցը հետ մըսըմհաթի են նստըմ, թան ինչ անեն, ինչ չանեն, որ չիմմիցը ղանչանգ իրևան:

—Դե, մեր ախպերն ուրան ախշարքովը մին խայտառակ ա արել, պրծել: Հեխճը ուրան կեոթնուկին ոնց ա մարթամեչ հանլիլու, գիղըմ չեմ,—ասըմ ա մեծ ախպերը:

—Ուրան տեղն ա: Կլխիցը կարքին ախճըկերքը կտրվել ին, որ քինանց կեոթնուկին թո՛ւնմիչ իլավ,—վրան յա պերըմ միչնանկ ախպերը:

—էտ ինչ ա, է, ծեր ախպոր ցավը ծե՞ղ են տվել,—մեչ են ընդնըմ կնանիքը,—տո՛ւք ծեր մասի մտածե՛ք, որ խայտառակ չինեք, ոչ մինս մին կարքին չոր էլ ա ունի ոչ, որ հըքնի: Ընենց պետմա անեք, որ չիմմի պերանը պանց մնա, մեր չորերին եչիլիս չիմմը նախանձից տրաքվեն:

—Մեր կոխկին թողալու չենք էտ այբեջուռա կեռթնուկին նըստընեն, —ասըմ ա մեծ ախպրակինը:

—Յարաբ տենաս՝ մեզանա նախշուն խանգաղեք է՞լ են ինիլու, թն Հենց մենք ու մենք ենք մնալու, —վրն յա պերըմ միչնակ ախպրակինը:

Եդո թնգնդան սոհրնթ են անըմ, թն ինչ պետմա կարեն, ով պետմա կարի:

Մինչու էս, մինչու էն, հրըսընքի վնդեն կնմ ա, չիմմ հրավերք ստացածնին՝ ննգիր-վնգիրնին, հրեան թաքավորնին՝ որը ոսկի, որն արծաթի, որը սնդնփանախշ կառեթնին նստած, զուքված-զըրթնրված վհաքվըմ են:

Հրըսանիքը բաշլամիչ ա ինըմ: Չիմմ դոնաղնին ուրննց կարքը գորն տեղ են փըռնըմ հրըսընքի ստողի չորս դոլին: Ստողը տնրնմոթի տակ ճըռճըռըմ ա. էլ ոսկի սինիքով տպակած դուշ, միս, էլ արծաթի սինիքով փլավ, ջնմերով կինի հու բնքմնց, ջուռա-ջուռա խմիչկեղեն ու չնրնց լըցած ա ինըմ: Ճնչերիցը մին նհենց անմահական հոտ ա պըցրանըմ, որ չիմմի պերանի ճրերը քինըմ ա, համա ոչ մինը կարըմ չի ծեռ տա մինչու հարսի հու փեսի կնլը:

Փեսեն, թնգն չոբերը հըքած, որ նի չի մըննըմ, չիմմի աչկերը չուլըմ ա, պերաննին պնց ա մնըմ: Ոչ մինը ուրն օրըմը ըտենց չափաղին տվող, ըտենց նախշուն չոբեր տեսած չի ինըմ:

Թաքավորի տղեն ասըմ ա. —Ի՛մ ննգիղ դոնաղնի, թնգն հարսի քեփը մին քիչ խարաբ էր, մհի բաքաթ ա, տոնք կերեք-խմեք, քեփ արեք, մինչու ընդան զուքեն-զըրթարեն:

Մին երկու ջնմ, որ խմըմ են, ուտըմ, թաքավորը տղին ասըմ ա. —Շա՞տ ենք սպասիլու, քինն հարսնացվիտ պե՛ր:

Տղեն քինըմ ա, հերն ու մերը, ախպերնին հու ըխպրակնանիքը քթերնների տակին ծիծնղըմ են: Համա թաքավորի տղեն որ Արմաղանի նհետ նի չի մըննըմ, չիմմը արմանք-զարմանք են կտրըմ: Արմաղանը նհենց չոբեր ա հըքած ինըմ, որ ասես երգրավոր չի, երգընքից ա վեր եկել: Տնեցիքը, որ գիղըմ ին՝ պննն ինչըմն ա, չըչկըլվըմ են, իսկը դոնաղնին, խելքամաղ իլած, հուռոտա են կանչըմ հու ծափ տալիս: Օխտը դնստն սազանդարնին, որ հարս ու փեսին տեսնըմ են, ուրոբ առաչ կտրիլով սկսըմ են ածիլն ու ընդանց թնրիփն անիլը:

Որ չիմմը մին քիչ հոշերնին վհաքըմ են կըլխընին, թաքավորի կըշտին նստած հրեան թաքավորը բոբըղնն ճըղղըմ ա. —Արմաղա՞ն, բալա՛ ջան, տոն սա՞ղ ես:

Արմաղանը, որ ետ սնսը լսւմ ա, տեղիցը թըռնւմ ա, փըթաթ-
վում հոր վզովը:

Թաքավորի տղեն էլ ա մոտկանւմ, չոքըմ հանոր առաչին, ասըմ
ա.—Ա՛ հեր, ախճիկըտ իմ ղըսմաթն ա իլել, օրթնի՛:

Հաները, որ օրթնւմ ա, տղեն տեղիցը վեր ա կենւմ հու պատ-
մըմ կլխով եկածը, ոնց որ ես ծեզ պատմեցի, եդո էլ չոքըմ հոր ու
մոր առաչին.—Ա՛ հեր ու մեր, ես հըրսանիքը սարքեցիք, որ ես
խախկ ու խայտառակ ինեմ, համա բախտըս քոմազ հըսավ, մհի
ծեր օրթնութունն էլ տվե՛ք, որ մենք փսակվենք:

Թաքավորն ու թաքուհին օրթնւմ են նորափսակներին, պաչըմ
երկուսի ճակատն ու օխտը օր, օխտը քչեր հըրսանիք են անըմ,
ուրխանըմ:

Հըրսընքիցը եդը հաներ թաքավորը կալիս ա խնամի թաքավո-
րի կուշտը, թա՛ տո՛ւ փեսիցըս գոմանն էրկու տղա էլ ունես, իսկը
ինձ մինըճար մին ախճիկ ունի, էն էլ քու հարսն ա տանել, թող փե-
սես կա իմ թախտին նստի, տղորցըտ մինին էլ քու թախտը տո՛ւ,
թող յոլա քինան:

Թաքավորը տենւմ ա, որ խնամին դո՛ւզ մըսըհաթ ա անըմ, կու-
ճի տղին առոք-փառոք ղըրկըմ ա հանոր տունը, ուրա՛ մեծ տղին
նըստըցնըմ ուրա՛ թախտին:

Էրկու թաքավորութունի ղաթըմը էլ կոիվ-ղալմաղալ չի ինըմ,
ապըմ են հաչտ ու հաղաղ, ջան ասըմ են, ջան լսըմ:

Հաղաղութուն ինի մեր աշխարքին էլ:

